

ք. Գավառ

25 մայիսի 2011թ.

«Գավառի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունն՝ ի դեմս ռեկտոր Ռուզաննա Խաչիկի Հակոբյանի և «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունն՝ ի դեմս տնօրեն Գ. Գևորգյանի (այսուհետ՝ Կողմեր), համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի և ՀՀ կառավարության 16.11.2006թ. թիվ 1760-Ն որոշումից բխող՝ «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու կարգի», ՀՀ կրթության և գիտության նախարարի 09.03.2007թ. N 137-Ա/Զ հրամանի՝ կնքում են սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Գավառի պետական համալսարանում Հրազդանի պետական քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են ուսումը շարունակել համապատասխան մասնագիտության գծով:

2. Կողմերը համաձայնվում են՝

2.1. Իրականացնել բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր Գավառի պետական համալսարանում ուսուցանվող այն մասնագիտություններով, որոնց գծով թույլատրվում է միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների կրթության շարունակումը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2.2. Համագործակցել՝ համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և կատարելագործման նպատակներով:

3. Գավառի պետական համալսարանը պարտավորվում է՝

3.1. Աջակցել Հրազդանի պետական քոլեջին՝ համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակման գործընթացում:

3.2. Հրազդանի պետական քոլեջին ցուցաբերել համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն՝ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

4. Հրազդանի պետական քոլեջը պարտավորվում է՝

4.1. Վերանայել և Գավառի պետական համալսարանի ուսումնական պլանների հետ համաձայնեցնել համապատասխան մասնագիտությունների գծով քոլեջի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը:

4.2. Գավառի պետական համալսարանի հետ համաձայնեցնել փոխադրման ենթակա շրջանավարտների ընտրության կարգը:

4.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները և ստորագրությունները.

«Գավառի պետական համալսարան»

ՊՈԱԿ

ք. Գավառ, Ազատության 1

հեռ. 010 28 2075

Ռեկտոր

Ռ. Խ. Հակոբյան



«25» մայիսի 2011թ.

ՊՈԱԿ

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ»

ՊՈԱԿ

ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս

հեռ. (0223) 2-07-95

Տնօրեն

Գ. Գևորգյան



«25» մայիսի 2011թ.